

Վրդ.ի, “որ պատճառ եղեւ գտանելոյ արտաքնոց
գրոց գիտութիւն”, ձեռնարկին նուիրուած տե-
սութիւնն ու տեղեկութիւնները:

Բարսեղէն ետքը Վարդան Բաղիշեցին, ոչ
միայն մշակեց Ամրտուլու Դասատունը այլ նաեւ
Հիմնովին վերաշինեց վանքը՝ սրբատաշ քարե-
րով. թէ տաճարը, “խաչակառ կաթուղիկէիւ”,
թէ միաբանութեան “րախատես” բնակարանները:
Վարդան մասնաւոր հոգ տարաւ եւ զարդարեց,
հարստացուց Ամրտուլը “աշակերտական գրքէս եւ հին
շարժանալի վարդապետական պէսպէս մարտնչ”:
Այս վարդապետին ջանքն ու արդիւնքը իրապէս “հա-
մախարան” մ’ըրին Ամրտուլը:

Ժամանակի հետ, տգիտութեան եւ չարա-
շահութեան յառաջ բերած փնտնեքէն ազա-
տուած՝ հռչակաւոր մատենադարանի մը մնացորդ-
ները, զորս մէկիկ մէկիկ աչքէ եւ ձեռքէ անցուցի,
կը ցուցնեն ու կը շեշտեն թէ ինչ ոգիով յոգնած
քրտնած եւ ծախսած է Բաղիշեցին Վարդան, այն
“քաղցրաքարող եւ համեղաբան” Վարդապետը,
որուն շնչովը սնած ու մեծցած են Կոլոտ եւ
Շղթայակիր:

Բարսեղ († 1615) եւ Վարդան († 1705)
քով քովի ամփոփուած են իրենց շինած շէնցու-
ցած Ամրտուլու վանքի հոյակապ Տաճարի ճիշդ
ատենին վրայ:

Վարդանին մահովը մահացաւ Ամրտուլու
դասատունն ալ: Չարաշունչ, նախանձաբեկ կրօ-
նաւորներ կը շնչէին արդէն եւ սրտի ցաւ մը կը
զգային Վարդանի պէս լուսամիտ եւ առատ բեմ-
բասացի մը ներկայութենէն:

Կոլոտ եւ Շղթայակիր, երիտասարդ վար-
դապետներ, անհուն մորմոքումով թողուցին “բար-
ձրահամբաւ եւ մեծ համալսարանը”, ուրիշ տեղ
գտնելու իրենց համար ասպնջական բոյն մը, երբ